ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 5-րդ ԴԱՍԱՐԱՆ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼ 2026-27 թ

Տևողությունը – 2 ժամ 30 րոպե

1. Գտեք 20-ի բոլոր բաժանարարների քանակը։
   1) 4 2) 5 3) 6 4) 7

2. Քանի՞ անգամ է 0 թվանշանը գրվում երեսուն միլիոն հարյուր չորս հազար քսան թվի թվանշաններով գրառման մեջ։
   1) 3 2) 4 3) 5 4) 6

3. Երկու թվերի տարբերությունը 9-ով փոքր է նվազելիից և 4 անգամ մեծ է հանելիից։ Գտեք այդ թվերի տարբերությունը։
   1) 36 2) 27 3) 18 4) 12

4. Ժամը քանի՞սն է, եթե հայտնի է, որ օրվա անցած մասը 7 ժ 30 րոպեով ավելի է օրվա մնացած մասից։
   1) 14 անց 45 րոպե 2) 15 անց 15 րոպե 3) 15 անց 30 րոպե 4) 15 անց 45 րոպե

5. Մարզիկը 1 ժամում անցնում է 18 կմ։ Քանի՞ վայրկյանում նա կանցնի 100 մետրը։
   1) 18 2) 20 3) 24 4) 30

6. Գտեք 5-ի բազմապատիկ այն բոլոր եռանիշ թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրի գրառման մեջ գոնե մեկ անգամ հանդիպում է 2 թվանշանը ։
   1) 36 2) 38 3) 40 4) այլ պատասխան

7. Կարի արտադրամասում եղած կտորից կարելի էր կարել չափահասի 14 միատեսակ հագուստ կամ մանկական՝ 21 հագուստ, ընդ որում երկու դեպքում էլ կտոր չէր ավելանա։ Արտադրամասում այդ կտորից արդեն կարել են չափահասի 4 հագուստ։ Մնացած կտորով քանի՞ մանկական հագուստ է կարելի կարել։
   1) 14 2) 15 3) 16 4) 17

8. Ֆուտբոլի առաջնությունում խաղացվեց 36 խաղ, ընդ որում՝ յուրաքանչյուր թիմ մյուսների հետ խաղաց մեկական խաղ։ Քանի՞ թիմ մասնակցեց առաջնությանը։
   1) 18 2) 12 3) 9 4) 8

9. 3, 6, 15, 42, 123, … թվերը գրված են որոշակի օրինաչափությամբ։ Գտեք հաջորդ թիվը։
   1) 364 2) 365 3) 366 4) այլ պատասխան

10. 500-ից փոքր քանի՞ եռանիշ թիվ կա, որոնց թվանշանները ձախից աջ փոքրանում են (օրինակ՝ 421-ը կհաշվենք, քանի որ 4>2>1, իսկ 322-ը չենք հաշվի, քանի որ 2≯2)։
   1) 11 2) 10 3) 9 4) 8

11. Արկղում կա 5 սպիտակ, 7 կարմիր և 10 կապույտ գույնի գնդակներ։ Առանց նայելու ամենաքիչը քանի՞ գնդակ պետք է հանել արկղից, որ նրանց մեջ լինի բոլոր երեք գույներից գոնե մեկական գնդակ։
   1) 4 2) 15 3) 17 4) 18

12. Երկու ավտոմեքենա միաժամանակ դուրս եկան A և B կետերից՝ շարժվելով միմյանց ընդառաջ: Նրանք առաջին անգամ հանդիպեցին 1 ժամ 30 րոպե անց: Շարունակելով շարժումը՝ առաջին ավտոմեքենան հասավ B կետին և անմիջապես հետ դարձավ, իսկ երկրորդը հասավ A կետին և նույնպես անմիջապես հետ դարձավ: Առաջին հանդիպումից որքա՞ն ժամանակ անց ավտոմեքենաները կհանդիպեն երկրորդ անգամ:
    1) 2 ժամ 2) 1ժ 30 րոպե 3) 3 ժամ 4) 4 ժամ

13. 1 խնձորը 1 սալորից ծանր է 70 գրամով, իսկ 2 խնձորը 3 սալորից ծանր է 100 գրամով: Քանի՞ գրամ են կշռում են 1 սալորը և 1 խնձորը միասին:
    1) 170 2) 160 3) 150 4) 140

14. Եթե մտապահված թվի կրկնապատիկից հանենք 14 և ստացված թիվը բաժանենք 9-ի, ապա կստանանք 20: Գտեք մտապահված թվի թվանշանների գումարը:
    1) 13 2) 14 3) 16 4) 17

15. Արամը նկատեց, որ ընթացիկ շաբաթվա առաջին և վերջին (երկուշաբթի և կիրակի) օրերի ամսաթվերի գումարը 14 է: Ի՞նչ օր էր այդ ամսվա առաջին օրը:
    1) երեքշաբթի 2) չորեքշաբթի 3) հինգշաբթի 4) ուրբաթ

16. Հայրը որդուց մեծ է 30 տարով: Քանի՞ տարեկան է հայրը, եթե 3 տարի հետո նա որդուց մեծ կլինի 4 անգամ:

17. Լևոնը գնեց մաթեմատիկայի տետր, որն ունի 48 թերթ և որոշեց տետրի էջերը համարակալել հաջորդական բնական թվերով՝ սկսելով 1-ից (այսինքն՝ առաջին էջի համարը կլինի 1, երկրորդ էջինը՝ 2 և այլն): Քանի՞ թվանշան պետք է գրի Լևոնն այդ տետրի բոլոր էջերը համարակալելու համար:
(Չմոռանաք, որ 1 թերթը 2 էջ է:)

18. Եթե եռանիշ թվին ձախից կցագրենք 7 թվանշանը, ապա կստանանք 2026-ով մեծ թիվ, քան աջից 6 կցագրելիս: Գտեք այդ եռանիշ թիվը:

19. Դասարանի բոլոր աշակերտները շարք են կանգնել: Յուրաքանչյուր շարքում կանգնած են հավասար թվով աշակերտներ: Վերջին շարքի առաջին տեղում կանգնած Լևոնը նկատեց, որ իրենից առաջ կա 4 շարք, իսկ իր շարքում իրենից ձախ կանգնած են 5 հոգի: Քանի՞ աշակերտ է սովորում այդ դասարանում:

20. Եթե երկնիշ թվից հանենք 7, ապա ստացված թիվը առանց մնացորդի կբաժանվի 9-ի, իսկ եթե հանենք 9, ապա ստացված թիվը առանց մնացորդի կբաժանվի 11-ի: Գտեք այդ երկնիշ թիվը: